

7993




Հ. Կ. (Բ) Կ.

IX

ՀԱՅԱԳՈՒՅՆԱՐ

ՀԿ(Բ)Կ ԿՎՀ-Ի
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ՀԿ(Բ)Կ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ



ԿՈՒՍՀՐԱՑ 1934

3KΠ2(47.925)

24 SEP 2006

9-20

Պրոլետարներ բուրք յմբկըների, միացե՛ք

1 DEC 2009

Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՐԴ
ՀԱՅՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՀԿ(Բ)Կ Զ-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

13249

ԿՈՒՍԴՐԱՏ

1934

ՅԵՐԵՎԱՆ

13.03.2013

7993

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՌԻԴԻՆԵՐՈՎ.

Ընկերներ, մեր կուսակցությունը, շնորհիվ ՀամԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեյի և մեր մեծ առաջնորդ ընկ. Ստալինի լենինյան ճիշտ գեկավարության, իր 16-րդ համագումարից մինչև 17-րդ համագումարը ձեռք է բերել հոյակապ, աննախընթաց հաղթանակներ սոցիալիզմի կառուցման բոլոր ճակատամասերում:

Ընկ. Խանջյանն այսակ անհրաժեշտ խորությամբ և կոնկրետ կերպով վերլուծեց մեր նվաճումներն ու թերությունները: Նրա հրավարակած թվերը փայլուն ապացույց են այն բանի, թե ինչպես նախկին ցարական Ռուսաստանը հետամնաց, ազրարային յերկրից, շնորհիվ կոմկուսակցության և Խորհրդային իշխանության վարած հեղտիփսական-բռլշկիկյան քաղաքականության կարճ ժամանակում դարձավ առաջավոր ինդուստրիալ յերկրը: Բավական և հիշատակել միայն այն վիստը, վոր յեթե առաջին հնգամյակի սկզբում մեր արդյունաբերության տեսակարգը կշիռը ժողովրդական տնտեսության մեջ կազմում եր 48 տոկոս, առաջ առաջին հնգամյակի վերջում այդ տոկոսը հասավ 70-ի: Խոկ վերջին տարվա մեր աշխատանքի արդյունքներն ել ավելի բարձրացրին այդ տոկոսը: Այս ցույց ե տալիս, թե ինչպես մենք կարճ ժամանակում հսկայական ճանապարհ կարեցինք մեր հետամնացությունը վերացնելու և կապիտալիստական տեխնիկական առաջավոր յերկրներին հասնելու ու անցնելու գործում:

Առանձնապես խոշոր են մեր նվաճումները զյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բնագավառում: Կոլտընտեսային կարգը գյուղում հաղթանակեց վերջնականապես և հաստատապես: Համատարած կոլեկտիվացման հիման վրա Խորհրդային Միության վճռական ընդամենքում վերացնելով կուլակությունն իրեն դասակարգ, զախշախելով մեր թշնամիների բացահայտ ու գարանամուտ բոլոր վոտնձգությունները, մենք կարողացանք իրագործել ընկ. Ստալինի պատմական ցուցումները՝ գյուղի աշ-



46854-67

Ա. Գալօնի

ОТЧЕТ ЦЕНТРАЛЬНОЙ КОНТРОЛЬНОЙ
КОМИССИИ КП(б)А

На 9-ом съезде КП(б) Армении

Партиздат ЦК КП(б)А
Эривань 1934

19165-59

իստանքի մասին, ուղղելով յեղած առանձին թերություններն ու սխալները: Մեզ հաջողվեց արագ կերպով առաջ տանել կուրտնեսությունների բոլցկիկացման և կոլտնտեսականներին ունեոր դարձնելու գործը:

Այսոր ամբողջ կուսակցությունը, մեր յերկրի բոլոր աշխատավորները բուռն վոգելությամբ պատրաստվում են դիմավորելու 17-րդ համագումարը, վորը կոչված ե ի մի ամփոփելու բոլցկիկան կուսակցության հաղթական պայքարի արդյունքները և նշելու անդասակարդ սոցիալիստական հասարակության կերտման՝ յերկրորդ հնդամյակի կոնկրետ ուղիները:

Նախորդ շրջանի մեր աշխատանքի փայլուն արդյունքները դաշտս են մի անգամ և ապացուցելու, վոր ճիշտ և այն ուղին, վորով առաջ և տանում մեր յերկրը լինինյան կուսակցությունը և նրա հանձարեղ առաջնորդ դնկ: Ստալինը:

1933 թ. մեր աշխատանքի արդյունքները կը կին անգամ ապացուցում են տնտեսության սոցիալիստական սիստեմի առավելությունները՝ կապիտալիստական սիստեմի նկատմամբ: Այս ժամանակ, յերբ կապիտալիստական յերկրներում գնալով խորանում և տնտեսական ճգնաժամը և ավելի ու ավելի յեն սրվում իմպերիալիստական յերկրների թե արտաքին և թե ներքին անլուծելի հակասությունները, յերբ որեց-որ աճում և միլիոնավոր մասսաների գործազրկությունն ու ծայր աստիճանի յե հասնում ալքատությունը, այլ նույն ժամանակ Խորհրդային Սոցիալիստական Մեծ Միությունն այն միակ յերկիրն ե, վորը վիթխարի քայլերով առաջ և ընթանում հաղթանակից գետի հաղթանակ:

Հաշվետու շրջանում հսկայական չափով աճել ե բանվոր դաշտակարգը, ավելի և ամրապնդվել ե պրոլետարիատի դիկտուրան և կոմունիստական կուսակցությունը:

Այսոր ավելի քան յերեք անպարտելի յեն դարձել Խորհրդային Միության դիրքերը միջազգային մասշտաբով: Դրա պերճախոս ապացույցը կարող ե ծառայել բուրժուական մի շարք յերկրների հետ չհարձակվելու պայմանագրեր կնքելը, Ամերիկայի հետ նորմալ հարաբերությունների հաստատումը և ԽՍՀՄ-ի պաշտպանության վիթխարի աճումը:

Սոցիալիստական հաղթարշավից հետ չի մնում նաև Անդրկոմկանը: Համեկ(ր)կ կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի պատ-

մական վորոշման կենսագործմամբ Անդրկոմկասի կուսակցական կազմակերպությունները ձեռք են բերել խոշոր հաջողություններ, վորոնց հեղինակավոր գնահատականը ավելի գուսակցության կենտրոնական կոմիտեյի որգան «Պրավդան»-ն, մատնանշելով, թե «Անդրկոմկասում մարդկի սկսում են խոշոր գործեր կատարել, գործեր, վորոնք մեր դարաշրջանի բովանդակությունն են կազմում»:

Այս գնահատականը խոսում ե այն վիթխարի ստեղծագործական աշխատանքի մասին, վոր վերջին յերկու տարում ծավալեցին Անդրկոմկասի կապիտալիստական կազմակերպությունները՝ Անդրկերկոմի և ընկ: Բնշայի բոլցկիյան ճիշտ դեկապարությամբ: Մենք հսկայական հաջողություններ ձեռք բերինք նավթի հանույթի ընդարձակման ասպարեզում, նորանոր հիգրո-կայաններ ու գործարաններ կառուցելու, զյուղի սոցիալիստական վերակառուցման և մեր դաշտերի վառության, Միության յերկրորդ բամբակագործական բազայի ամրացման ասպարեզում, ինչպես նաև ցիտրուսային կուլտուրաների, թեյի, ծիախոտի տարածությունների ընդարձակման ուղղությամբ:

Խորհրդային Հայաստանը, վորպես Սոցիալիստական Խորհրդային Միության մի անրաժան մասը, սոցիալիզմի կառուցման ճակատում միշտ ել ընթացել է Խորհրդային Միության մյուս յերկրների հետ համաքայլ: Հայաստանի բոլցկիյան կուլտուրայի անմիջական ոգնությամբ, մեր յերկրը ցարական գաղութից վերածեցին ֆարթամորեն գարգացող ու ծաղկող ին-գուստը հագուստը ապրանքարարային յերկրի: Կառուցվել ու շահագործման են հանձնվել տասնյակ նորանոր գործարաններ: Հենց միայն վերջին տարվա ընթացքում գործարկվեցին այնպիսի հսկաներ, ինչպիսիք են՝ Զորագետի հիղուկայանը, Ցեմենտի գործարանը, Ղարաբեկսայի Քիմիկական կոմբինատը և այլն: Հիմնական վերակառուցման ե յենթարկվում մեր պղնձաարդյունաբերությունը: Մենք ձեռնարկել ենք այնպիսի հսկաների կառուցմանը, ինչպիսին են Կառուչուկի կոմբինատը, Զանգվիր ելեկտրակայանների կասկադը, Ագարակշինը, վորը Խորհրդային Միությանը տալու յե խոշոր քանակությամբ դեֆիցիտային մոլիբդեն: Ահա այս և բազմաթիվ այլ նվաճումներ հիմնովին փոխել են մեր յերկրի տնտեսական քարտեզը:

Բնթացիկ շըջանում հսկայական աշխատանք և կատարված դյուլի սոցիալիստական վերակառուցման տապարեզում, գյուղում վերջին տարվա ընթացքում զգալի չափով ավելացավ կոլտնտեսային ցանքերի տարածությունն ու բարձրացավ բերք տավությունը, կոլտնտեսությունների մեծ մասը կազմակերպչորեն, տնտեսապես ու քաղաքականապես ամրապնդվեց, բարձրացավ կոլտնտեսական ների խոշոր մասի նյութական-կենցաղային դրությունը:

Մեծ են նաև մեր նվաճումները կուլտուրական շինարարության ասպարեզում. հսկայական ստեղծագործական աշխատանք և կատարված՝ բովանդակությամբ պրոլետարական, ձևով ազգային կուլտուրայի կերտման ուղղությամբ: Հիմնվել են հարյուրավոր նոր կուլտուրական ձեռնարկություններ, վորոնց թվում հըսկայական քանակությամբ նոր դպրոցներ, բուհեր, տեխնիկումներ, թատրոն, կինո, թերթեր, գրականություն և այլն:

Ընկերներ, այս բոլոր նվաճումները մենք ձեռք ենք բերել շնորհիվ կուսակցության գլխավոր գծի ճիշտ կիրառման, Անդրբյուրկոմի ու ՀԿ(Բ)Կ կենտկոմի ստալինյան ղեկավարության, շնորհիվ դասակարգային թշնամու և ամեն գույնի ոպորտունիքմի գեմ մղվող ջախջախիչ ու անհաշտ պայքարի:

Անկասկած, Հայաստանի կուսակցական կազմակերպություններն այդ պայքարում գաղափարապես և քաղաքականապես ապելի կոփվել ու աճել են, այսոր ավելի ամրակուր են նրանց շարքերը:

Վեր ե ամեն կասկածից, վոր ԿՎՀ-ԲԳԾ-Ն, իր որգանների հետ միասին, խոշոր գեր ե կատարել այդ պայքարի և նվաճումները ձեռք բերելու գործում: Յելնելով Համկ(Բ)Կ կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշումից ու ընկ. Ստալինի հունվարյան պլենումում տված ցուցումներից, ԿՎՀ-ԲԳԾ որգանները հսկայական աշխատանք են կատարել վերակառուցելու համար իրենց գործունեյությունը կուսակցության վորոշումների ճշգրիտ կիրառման համար մղվող պայքարի ուժեղացման ուղղությամբ, բարձրացրել են կուսակցական կազմակերպությունների զգաստությունը, կարողացել են ել ավելի համարմբել կուսակազմակերպությունները մեր կուսակցության գլխավոր գծի անշեղ կիրառման շուրջը:

ԿՎՀ-ԲԳԾ-Ի ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՐՈՒՄ

Ընկեր Խանջյանն արդեն մանրամասնորեն կանգ առավ Հայաստանի արդյունաբերության նվաճումների, թերությունների ու խնդիրների վրա:

Հնգամյակի կատարումն իրոք վոր հիմնական փափոխության յենթարկեց Հայաստանի արդյունաբերությունը, կառուցվեցին ու գործարկվեցին վոչ միայն տասնյակ նոր գործարաններ, այլև մեր նախկին գործարաններում աշխատանքի դրվեցին նոր մեքենաներ, նոր սարքավորումներ, վորոնք պահանջում են բոլորվովին այլ վերաբերմունք: Հին տեխնոլոգիական պրոցեսներըն իրենց տեղը զիջեցին նոր բարդ պրոցեսների. Փոխվեցին նաև աշխատանքի կազմակերպման ձևերը: Այս պայմաններում ԿՎՀ-ԲԳԾ-ի հիմնական խնդիրն եր՝ հետևել արդյունաբերական ձեռնարկությունի պլանների կատարմանը, տեխնիկայի յուրացմանը, ինքնարժեքի իջեցմանը, աշխատանքի արտադրողականության բարձրացմանն ու արտադրված ապրանքների վարակի լավացմանը:

Այս բոլորին զուգընթաց, մենք զբաղվել ենք նաև Համկ(Բ)Կ կենտկոմի՝ Դոնբասի մասին ընդունած վորոշման կապակցությամբ մեր արդյունաբերության ղեկավարման ձևերը վերակառուցելու կոնկրետ խնդիրներով:

Հաշվետու ժամանակաշրջանում մենք խոշոր աշխատանք ենք կատարել պղնձաբարդյունաբերության վերակառուցման ուղղությամբ: Ինչպես անցյալ տարի, նույնպես և այս տարի, մենք հիմնական ուսումնասիրության յենթարկեցինք մեր պղնձաբարդյունաբերության աշխատանքը և կենտկոմի հետ միասին մի շարք միջոցներ ենք ձեռք տուել պղնձի արդյունաբերությունը հետագայում առաջ մղելու համար: Այստեղ հատուկ ուշադրություն ենք զարձրել հետախուզական աշխատանքներին: Հարցն այն ե, վոր պղնձաբարդյունաբերության մեջ հետախուզական աշխատանքն ակներև կերպով թերագնահատվել և անցյալում: Հետախուզական աշխատանքի պլանները տարեց-տարի կրճատվել են: Յեթե, որինակի համար, 1931 թ. հետախուզական հորատման պլանը Ալլահվերդում կազմում եր—7.000 մետր, ապա 1932 թվին նա արդեն կազմում եր 6.100, իսկ 1933 թ. իջնում և մինչև

4.000 մետրի: Հատուկ նշանակություն տալով պղնձարդյունաբերության հետախուզությանը, ԿՎՀ-ԲԳՏ-Ն ամենաակտիվ մասնակցությունն ունեցավ հուլիս ամսին Ալլահիկերդում կայացած հետախուզական կոնֆերանսին: Սիստեմատիկ կերպով հետևելով պղնձաարդյունաբերությանը, մենք հայտաբերեցինք և ուղղեցինք Աշխատողկոմատի ու ՀԱՄԽ-ի վորոշ աշխատողների՝ աշխատավարձի բնագավառում թույլ տված սխալները:

Հոկտեմբեր ամսին մենք կրկնակի ստուգում կատարեցինք կենտրոնի և ԿՎՀ-ի վորոշումների իրազործման կապակցությամբ: Ստուգումը ցույց տվեց, վոր Պղնձաարդյունաբերության Տրեսը դեռ հիմնովին չի վերակառուցել իր աշխատանքը: Անդրկովկասի Դունավոր Մետաղը և նրա կոմբինատները դեռ չեն դարձել պղնձաարդյունաբերության ղեկավարության իսկական մարտական շտաբ, դեռ չեն վերակառուցված և ուժեղացված ստորին արտադրական ողակները, հանքահոր չեն ուղարկված անհրաժեշտ քանակությամբ ինժեներ-տնիմների լավագույն կադրեր: Ստուգումը ցույց տվեց, վոր այդ բոլորի հետևանքով պլանները դեռ շարունակում են թերակատարվել, անհրաժեշտ աշխատանք չի ծավալված պղնձաարդյունաբերության վորակական ցուցանիշները բարձրացնելու համար:

Առանձին ուշադրություն դարձնելով պղնձաարդյունաբերության ինդիբներին, մենք հատուկ միջոցներ ենք մշակել ու կիրառել նաև կապիտալ շինարարության ուղղությամբ:

Յեզ վերջապես՝ ԿՎՀ-ԲԳՏ ակտիվ մասնակցություն ցուցաբերեց Միության ծանր արդյունաբերության հատուկ եքսպերիցիայի աշխատանքներին, մեր պղնձաարդյունաբերական ինդիբները կրկին անգամ քննության յենթարկվեցին արդեն նոր պայմաններում, պղնձի ու մոլիբդենի հայտաբերված նոր պաշարների լիակատար ոգտագործման հարցի կապակցությամբ:

* * *

Ինչպես ձեզ հայտնի յե, մեր արդյունաբերության եներգետիկ բազան հանդիսանում են մեր ելեկտրակայանները, վորոնց բավարար և անխափան աշխատանքից և կախված մեր գործարանների արդիւնավանների կատարումը: Սակայն այս գծով մենք ունեցանք լուրջ ճեղքվածքներ ու բացեր, վորոնք ժամանակին հերեան հանվեցին ԿՎՀ-ԲԳՏ-ի կողմից: Բավական և նշել, վոր

միայն թեթև արդյունաբերության ձեռնարկություններում, ութ ամսվա ընթացքում, ելեկտրակայանների անբավարար աշխատանքի պատճառում ընդհանուր պարապուրդները կազմել են 22 տոկոս, վորը հավասար է՝ 2.500.000 ժամվա աշխատանքի: Ահա թե ինչու մենք հաշվետու ժամանակամիջոցում հատուկ ուշադրություն ենք դարձրել մեր ելեկտրակայանների աշխատանքի բարեկավմանը: Միքանի անգամ ուսումնասիրված են յեղել Զորագետի, կենինականի ելեկտրակայանները, ուսումնասիրվել են նաև ելեկտրասարքավորումների մոնտաժային աշխատանքը: Ընթացիկ շրջանումն եր, վոր զբաղվեցինք նաև Համամելիութենական Ելեկտրատեխնիկական Միավորման բաժանմունքի խնդրով և ստիպված յեղանք, այսաեղ յեղած թերությունների պատճառով, հանել աշխատանքից և պատժել մի շարք ղեկավար ընկերների:

* * *

Հայաստանի աշխարհագրական դիրքն ու բնական հարստությունները լայն հնարավորություն են ընձեռում Հայաստանում զարգացնելու շինանյութեր արտադրող արտադրական ձեռնարկությունները (տուֆ, պեմզա, կրաքար, աղյուս, պեմզա-բետոնի բլոկներ, գրանիտ, մարմար և այլն): Ուստի և բնական և այն խոշոր ուշադրությունը, վոր հաշվետու ժամանակաշրջանում մենք դարձրել ենք այդ գործարանների և ձեռնարկությունների աշխատանքի վրա՝ մեր շինանյութերի արդյունաբերության մեջ յեղած թերություններն ու բացերը վերացնելու նպատակով: Ուսումնասիրության են յենթարկված Փամբակի գրանիտի գործարանը,

ավալուի կրի, Յերևանի մարմարի, Յերևանի գաճի գործարանները, Նուռնուռսի ղիատոմիտի հանքերը, Հայտնարկուողի շինանյութեր արտելների աշխատանքը, Անի-Պեմզան, Արթիկ-Տուֆը և գրանց պլանների կատարման վիճակը:

Չնայած կենտրոնի և ԿՎՀ-ԲԳՏ-ի ձեռնարկած միջոցներին՝ այդ գործարանների պլանները 1933 թ. թերակատարվել են. կրի տարեկան պլանը կատարված է ընդամենը 55 տոկոսով, աղյուսի պլանը՝ 50 տոկոսով, գրանիտի պլաննը՝ մոտ 40 տոկոսով, պեմզա-բետոնի գործարանի պլաննը՝ մոտ 88,7 տոկոսով, Հայտնարկուողի տուֆի հանքերի պլաննը՝ 54 տոկոսով:

Մեր բազմաթիվ ստուգումներն ապացուցեցին, վոր նշված ձեռնարկությունների պլանների թերակատարման հիմնական պատ-

ձառը հանդիսանում ե նրանց աշխատանքի անբավարար կազմակերպումն ու ղեկավարումը, ինչպես նաև տեխնիկայի ու մեխանիկացիայի անբավարար վիճակը: Որինակ, Դավալուի կրի գործարանում յերկու տարվա ընթացքում չէրին կարողանում աշխատանքի դնել կրի յերկրորդ պատրաստի վառարանը: Հարկավոր յեղավ վոխել գործարանի դիրեկտորին, աշխատանքի ուղարկել մեր լավագույն մասնագետներից մեկին, և վառարանն անմիջապես հանձնվեց շահագործման:

Նմանորինակ մի այլ զայրացուցիչ փաստ, վոր Կվէ-ԲԳՏ-ն հայտաբերեց յուր ժամանակին, դա դեպի սկզբա-բետոնի բլոկների գործարանը ցուցաբերված անթույլատրելի վերաբերմունքն եր Ծանր արդյունաբերության ժողկումատի ապարատի կողմից՝ շամապելու դազգյաներ պատրաստելու խնդրում:

Չենք կարող այստեղ չարձանագրել այն աղաղակող փաստերը, վորոնք վերաբերում են Ֆերմանի մարմարի գործարանին: Այդ գործարանի ներկա սարքավորումը, գործի լավ կազմակերպման դեպքում, իվիճակի յետարեկան տալու 12.000 ք. մետր մարմար: Մինչդեռ այդ գործարանը տարեկան տալիս ե վոչ ավելի, քան 2.000 ք. մետր:

Իբրև ընդհանուր յեղակացություն՝ պետք ե շեշտել վոր այս փոքրիկ գործարաններում անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում արտադրությունը մեխանիզացիայի յենթարկելու և յեղած սարքավորման կարողությունը լիովին ոգտագործելու վրա:

* * *

Վերջին յերկու տարում Կվէ-ԲԳՏ-ն հատուկ ուշադրություն է դարձրել նաև մեր թեթև արդյունաբերության ձեռնարկությունների գործունեյությանը: Ուսումնասիրության են յենթարկված լենինականի Տեքստիլի արդյունաբերությունը, կարի գործարանները, մետաքսի, ծինախոտի և կաշու գործարանները:

Ընկերներ, գուք յերկու հիշում եք, թե ինչպիսի դրության մեջ եք գտնվում անցյալ տարի (1932 թ.) լենինականի Տեքստիլը՝ Շնորհիվ կենտրոմի և Կվէ-ԲԳՏ-ի ձեռք առած կտրուկ միջոցների՝ ամենակարճ ժամանակամիջոցում վերացվեցին խօսր թերությունները, բարելավվեց գործարանի ֆինանսական դրությունը և Տեքստիլն սկսեց դուրս գալ ձեղքվածքներից:

Մեր թեթև արդյունաբերությունը գնալով ավելի ու ավելի

դարձանում ու աճում ե: Սակայն մենք ունենք այնպիսի ձեռնարկություններ, վորոնք իրենց պլաններն զգալի չափով թերակատարում են: Որինակ՝ վատ ե աշխատում Յերևանի կարի գործարանը: Այս գործարանը 11 ամսում ավել է 639.115 ո. խոտանապրանք, վորը կտպմում ե վողջ արտադրանքի 8,6 տոկոսը: Ավելին, գնալով ամել ե խոտանի տոկոսը: Որինակ, 1933 թ. առաջին յեռամսյակում խոտանը կազմել է 3,3 տոկոս, իսկ յերկրորդում՝ 24,3 տոկոս: Ապրանքների պահանջված գորակը չպահպանելու հետևանքով, գործարանը տուգանք ե վճարել 181.747 ո.՝ Անա ձեզ վատթարագույն տնտեսավարության խայտառակ արդյունքը: Այս ամենի համար ստիպված յեղանք մի շարք զեկավար աշխատողների դատի տալ:

Հաշվետու ժամանակաշրջանում Կվէ-ԲԳՏ-ն զբաղվել ե կաշու գործարանի գրությամբ, վորն իր սարքավորումով ու տեխնիկական հնարավորություններով Միության ամենալավ գործարաններից մեկն ե: Այս գործարանը մինչև որս վերջնականապես չի լուծել հումուրիթի խնդիրը և անընդհատ հում նյութի կարեք ե զգում: Մենք ձեռք առանք հնարավոր միջոցներ՝ այդ հարցի վերջնական լուծումն արագացնելու համար:

Այստեղ չի կարելի աչքաթող անել այն իրական և գործնական պայքարը, վոր մղեց Կվէ-ԲԳՏ-ն մեր գործարաններում յեղած (անդորր ընկած) ավելորդ, չոգտագործվող արտադրական միջոցները և զանազան սարքավորումները նպատա ահարմար կերպով ոգտագործելու համար: Այդ պայքարի արդյունքն յեղավայն, վոր հայտաբերեցինք 1.500.000 ո. չոգտագործվող սարքավորումներ ու զանազան գործիքամասեր, վորոնց ոգտագործման համար ձեռք առանք պետք յեղած միջոցները:

Այս տարի մենք ընդհանուպ զբաղվել ենք անտառային տնտեսության խնդիրներով: Ստուգման ենք յենթարկել՝ շահագործման հանձնելուց հետո՝ իշեանի անտառանյութերի գործարանը, վորը զիսավորապես արտադրում ե բարձր վորակի եքսպորտային տախտակներ: Այդ գործարանը, վոր ունի բավական քանակությամբ իմպորտային բարդ դազբյահներ, Անտառանդողիկումատի կողմից մատնված ե յեղել անուշագրության և հարկ յեղած միջոցները ձեռք չեն առնվել գործարանն ապահովելու վորակյալ մասնագետներով: Այս գործարանի ստուգման արդյունքները մանրամասն քննության են յենթարկվել և Կվէ-ԲԳՏ-ն ձեռք ե առել

մի շարք կոնկրետ միջոցներ՝ գործարանի աշխատանքը կանոնավորելու համար:

Միքանի անգամ ստուգման և յենթարկված Յերևանի Փայտահակման գործարանը: Ծնորհիվ արտադրության վատ կազմակերպման ու անբավարար վորակի, այստեղ կուտակվել եր հայուր հազարների արտադրանք: Քննելով այս խնդիրը, մենք կոնկրետ վարոշումներ ընդունեցինք գործարանի աշխատանքը լավացնելու ուղղությամբ, վորի շնորհիվ գործարանն սկսել ե առաջ գնալ:

ԿվՀՀԳԲՀՆ մեծ ուշադրություն ե դարձրել տնայնագործական կոսովերացիայի արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքին: 1933 թ. այստեղ կատարեցինք չորս հետազոտություն, վորոնք նպատակ ունեցին հայտարերել ու վերացնել Հայտնարկուպում յեղած թերությունները: Մեզ հաջողվեց Հայտնարկուպի պլանները կազմելու և հաշվառման գործում յերևան հանել մի շարք աչքակապության փաստեր: Հայտնարկուպում տեղի յն ունեցել նաև ֆինանսական դիսցիլինայի կոսկիտ խախտումներ, վորոնց հեղինակներին ժամանակին հարգածեց ԲԳԲՀՆ:

* * *

Այդ բոլորից հետո թույլ տվիք միքանի խոսքով ամփոփել մեր արդյունաբերության այն թերություններն ու բացերը, վորոնց վերացման համար պետք ե շարունակել անխնա պայքարն այս տարի:

Տվյալ ժամանակաշրջանում մենք չկարողացանք լիովին իրագործել Համկ(ր)կ կենտրոմի հունվարյան պլենումի այն ցուցումը, թե ներկայում մեզ համար գլխավորն արտադրության վորակական ցուցանիշներն են և վոչ քանակականը:

Համեմատաբար կատարելով աշխատանքի արտադրականության պլանը, մեր գործարանները թույլ ուշադրություն են դարձրել բանվորական օրիվա լիսակատար և ուսցիոնալ ոգտագործման վրա: Մեր ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, վոր, որինակ, Ղափանի հանքերում հանքափորների աշխատանքի մոտ 30 տոկոսն ընթանում ե վոչ արտադրական ուղղությամբ, բանվորները հանքում սպասում են ոդ տալուն, գործիքներին և այլն: Այսպիսի դրություն ե հայտարերված նաև Կարի գործարանում, Արթիկ-Տուֆում:

Հիմնական թերությունն այստեղ այն ե, վոր բանվորական որվա խտացման ու ուսցիոնալ ոգտագործման խնդիրներին մեր տեղական կազմակերպություններն անբավարար ուշադրություն են դարձնում:

Միքանի խոսք կցանկանայի ասել բանվորական ուժի վերաբերյալ: Մեր միքանի տնտեսավարները տեղի-անտեղի միշտ խոսում են բանվորական ուժի պակասության մասին, սակայն իրենք միշտ և ամենուրեք հոգատար վերաբերմունք չեն ցույց տալիս դեպի բանվորական ուժը, ժամանակին չեն բարեկավում բանվորների բնակարանային դրությունը, միջոցներ ձեռք չեն առնում բարվոքելու նրանց մատակարարումը, վորի հետևանքով ել դեռ մեր գործարաններում գոյություն ունի բանվորական ուժի զգալի հոսունություն: Այս նշանակում ե, վոր մեր մի շարք գործարաններ դեռ խսկալեն չեն իրավործել ընկ. Ստալինի դեկավար 6 ցուցումները, առանց վորոնց լիսակատար կենսագործման անհնար և առաջ ընթանալ:

Այնպիսի գործարաններում, ուր իրական պայքար ե ծավալված ընկ. Ստալինի ցուցումների իրականացման համար, հոսունությունն ավելի քիչ տոկոս և կազմում. զբանց շարքին են պատկանում կոնսերվի, կարրիտի, «Արարատ», Մելիանիկական, Կաշու, Զեթ-Ոճառի գործարանները. և ընդհակառակը, այստեղ, ուր գործը վատ և կազմակերպված, հոսունությունն ավելի բաժանում տոկոս և կազմում. որինակ, Ալլահվերդին, Գրանիտի, Կարի գործարանը և այլն:

Միանգամայն անբավարար դրության մեջ ե գտնվում մեր գործարանների սարքավորման ու դազգյանների ոգտագործումը, վորի պատճառով մենք տասնյակ հազարավոր ոուրելու արտադրանք ենք կորցնում: Որինակ՝ ոգոսառոս ամսին Մարմարի գործարանում դազգյանների պարապուրդը կազմել ե 36 տոկոս, Արթիկ-Տուֆում, վորտեղ աշխատանքը հիմնովին մեխանիզացիայի յե յենթարկված, նույն ոգոսառոս ամսին պարապուրդը յեղել ե 29 տոկոս: Քարհատմեքնաների պարապուրդը կազմել ե 68 տոկոս: Գրանիտի գործարանում պարապուրդի տոկոսը համառ ե 42-ի, թեթև արդյունաբերական ձեռնարկությունների գծով ութ ամսվա ընթացքում դազգյանների պարապուրդը կազմել ե 10 տոկոս, վորը մոտավորապիս հավասար ե 11.612.000 մեքենաժամի աշխատանքի: Ալլահվերդում պնեվմատիկ փորիչներն ոգտագործվում են միայն 70-

տոկոսով: Այդպիսի պայմաններում խոսել ինքնարժեքի իջեցման մասին՝ դժվար ե: Մեր գործարաններից շատ քչերն են պահպանում պլանային ինքնարժեքը, հիմնականում բոլորն ել այս կամ այն կերպ խախտում են պլանային ինքնարժեքը, վորի հետևանքով փոխանակ իջեցնելու արտադրանքի զները, բարձրացնում են: Մինչեռ մեր հիմնական ինդիրներից մեկն ել արտադրանքի ինքնարժեքի իջեցումը և գործարկված գործարանների տեխնիկայի իսկական յուրացումն ե: Հենց այս նպատակով ել մեր տընտեսավարները պետք ե անհապաղ վերացնեն յեղած թերությունները, լիովին ոգտագործեն թե բանվորական որը և թե մեքենասարքավորումները, պլանների կատարման պաֆոսին միացնելով վորակի բարձրացման պաֆոսը: Ահա թե ինչին պետք ե ձըգտենք մենք:

Այս ինդիրների վրա յես առանձնապես կանգ առա, վորովհետեւ դրանք հանդիսանում են մեր աշխատանքի հիմնական հարցերը: 1933 թ. դասերը հաշվի առնելով, մենք 1934 թվականը պետք ե դարձնենք ինքնարժեքի իջեցման, տեխնիկայի տերապետման և վորակի բարձրացման տարի:

Վերջին խնդիրը, վորը ցանկանում եմ զոշագել, դա մեր գործարանների աշխատանքի վերակառուցումն ե: Համել(թ)կ կենտկոմի և ԺԿԽ-ի գորոշումները՝ Դոնբասի և յերկաթուղու վերաբերյալ՝ բավարար գործնական արձագանք չեն գտել մեր մի շարք տընտեսական միավորներում, մանավանդ ժողկումատներում (հատկապես Սատողկոմատում, Անտառողկոմատում):

Համոզված կարելի յե ասել, վոր մի շարք ձեռնարկություններ և ժողկումատներ դեռ շոշափելի քայլեր չեն արել վողջ արդյունաբերությունը վերակառուցելու, նրա զեկավարության մեթոդները ձկունացնելու գծով: Առանձնապես դանդաղ կերպով և ընթանում վորակյալ կաղըերն (ինժեներներ և այլն) արտադրության ստորին ողակները փոխադրելու աշխատանքը: Ուղղակի գատապարտելի յե այն հանգամանքը, յերբ մինչև որս արտադրության ստորին ողակներն են փոխադրված ընդամենը 22 մունագետ:

Ինչ խոսք, վոր այստեղ պետք ե ստեղծել արմատական բեկում և միջոցներ ձեռք առնել 1934 թ. իսկապիս վերակառուցելու մեր արդյունաբերության հետ մնացած ճյուղերը:

Ծագալել լայն աշխատանք հատկապես տեխնիկումի կի-

րառման ուղղությամբ, այնպես կազմակերպել գործը ահեխմինիւմումի ասղարեղում, վոր բանվորական մասսաները գլխովին ներդրավվեն տեխնիկայի յուրացման համար մղվող պայքարում, բարձրացնել բոլշևիկյան վոգեորության նոր ալիք՝ սոցմրցման, հարվածայնության և տեխնիկայի տիրապետման համար — ահա թե ինչի վրա մենք պետք ե բնեունք մեր ուշադրությունը: Այստեղ վճռական դեր ունեն պրոֆմիությունները, վորոնք պետք ե կոնկրետ ձեռնարկումներ անեն այս նպատակով:

Իվերջո յես ցանկանում եմ յերկու խոսք ասել մեր գործարանների կողմից չափեց գուրա շատ գրվող, իսկ յերեխն ել իրականությանը չհամապատասխանող ուսպորտների մասին: Մեր կատարած ստուգումները ցույց են տալիս, վոր ընկերներից վամանք, տարվելով աշխատանքի արտաքին, ձևական կողմով, չափեց գուրս շատ ուսպորտներ են գրում, իսկ յերբ սկսում ենք ստուգել, տեսնում ենք, վոր այդ ուսպորտներն իրականությանը չեն համապատասխանում: Այդպիսի դրություն մենք հայտաբերեցինք միքանի կազմակերպություններում (Կարի գործարան, «Սևլիոզնար», Հայտնարկոոպ, Ղոերի շինարարություն):

Բնկերներ, մեզ հարկավոր ե քիչ ուսպորտ, բայց շատ գործ:

ՄԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

Հնկերներ, այս վերջին յերեք տարվա ընթացքում բավական խոշոր գումարներ ենք ներդրել ժողովրդական տնտեսության մեջ՝ շինարարության գծով: Արդյունաբերության մեջ ներդրված ե 107 միլ. ոուրլի, եկեկտրակայանների շինարարության մեջ՝ 48 միլ. ոուրլի, ընակարանային շինարարության մեջ՝ 25 միլ. ոուրլի, այլ աեսակի շինարարության մեջ՝ 135 միլ. ոուրլի: Այս գումարներից զուտ շինարարության վրա նախատեսված ե յեղել ծախսել 1932 թ. 80 միլ. ոուրլի, իսկ 1933 թ.՝ 123 միլ. ոուրլի:

Շինարարության հսկայական այս ծավալը մեր առաջ հրատապ խնդիր եր գնում ամենալուրջ ուշադրությունը դարձնել շինարարական կազմակերպությունների աշխատանքին՝ ներդրված գումարները ժամանակին իրացնելու համար:

Շինարարության վրա հսկողությունն ուժեղացնելու նպատակով՝ մենք 1933 թ. ապրիլ ամսից Կվէ-ԲԳՁ-ին կից կազմա-

կերպեցինք հասուլկ շինարարական տեսչություն, վորը պետք է սիստեմատիկ հսկողություն սահմաներ շինարարական կադրակերպությունների վրա, միաժամանակ ուշադրության կենտրոնը դարձնելով կատարած շինարարական աշխատանքի բարձր վորակն ու ինքնարժեքի իշեցումը, ապահովելով պլանների ճշշտելու ժամանակին կատարումը:

ԿՎՀ-ԲԴ-ն, բացի այն սիստեմատիկ հսկողությունից, վորահմանել եր խոշոր և գործարկվող շինարարությունների վա (Քանաքեռշին, Յերևանի 2-րդ ելեկտրակայանը, տրամվայը, Ղուեր շինարարություն, Ցեմշին և այլն), հաշվետու ժամանակամիջոցում կատարել ենակ մի շարք այլ հետազոտումներ մեր շինարարության ընդհանուր դրությունը պարզելու համար:

Յերկու կարծիք չի կարող լինել այն մասին, վոր վերջին տարիներում շինարարության ասպարեզում մենք ձեռք ենք բերել խոշոր նվաճումներ: Այդ նվաճումները շեշտեց ընկ. Ա. Խանջյանը: Այդ նվաճումները դուք տեսնում եք ամեն որ: Աւստի սիստի կիներ, այդ ասպարեզում յեղած աղաղակող թերություններից յենելով, նսեմացնել կամ վարկաբեկել մեր շինարարական մարմինների հաջողությունները: Սակայն այդ մասին չե, վոր յես առանձնապես պիտի խոսեմ: Յես պետք են ձեր ուշադրությունը բենում այն ուղղակի անմիտիթար վիճակի վրա, վորն ապրում եայսոր մեր շինարարությունը, վորը մենք հանդուրժել չենք կարող, և վորի բարփոքման ուղղությամբ չպետք են խնայել վոչ մի ջանք:

Շինարարական կազմակերպությունների ղեկավարների, ինչպես նաև կուսակցական ու պրոֆմիութենական կազմակերպությունների թույլ ու անբավար աշխատանքի հետևանքով՝ շինարարական պլանները 1932—1933 թ. թ. սիստեմատիկորեն թերակատարվել են:

Այսպես, 1932 թ. գուտ շինարարության համար նախատեսված 80 միլ. ոռուբլուց փաստորեն ծախսված են 61 միլ. ոռուրի, իսկ կատարված աշխատանքն իր Փիզիկական ծավալով կազմում են միմիայն 47 միլ. ոռուրուց: Ավելի վատ եղությունը 1933 թվականին. նախատեսված 93 միլ. ոռուբլուց 9 ամսվա ընթացքում ծախսված են 58 միլ. ոռուրի, իսկ փաստորեն կատարված աշխատանքը կազմում են 42 միլ. ոռուրուց: Այսպիսով մենք տեսնում ենք, վոր 1932 թ. մեր շինարարությունը ղեկավարող ընկերների

վատ աշխատանքի պատճառով կորցրել ենք 14 միլ. ոռուբլի, իսկ 1933 թ. 9 ամսում՝ մոտ 16 միլ. ոռուբլի, վորը հետևանք եղիսավորապես շին. մարմինների անբավարար աշխատանքի ու շինարարության թանգացման:

Վորոնիք են այն հիմնական պատճառները, վոր խանգարում են պլանների կատարմանը: Դա շինարարական կազմակերպությունների աշխատանքի թույլ վերակառուցումն ե, Ժկն-ի վորոշման անբավարար իրագործումը, ընկ. Որշոնիկյանը հրամանը ժամանակին չկատարելը, շնարարության մեխանիզացիային կատամար ունեցած հանցագոր վերաբերմունքը:

Միթե կարելի յենորմալ համարել այն դրությունը, յերբ Քանաքեռշինում 13 կոմպրեսորներից մինչև ընթացիկ տարվա վերջին ամիսները շահագործվել են միայն չորսը, 8 բեռնաբարձ մեքենաներն անգործության են մատնված յեղել:

Ղուերի շինարարության մեջ վեց եքսկուվատորներից չորսը սիստեմատիկ անգործության են մատնված յեղել: Հայգլիճանապահնում հարթիչ մեքենաների արտադրականությունը կազմել են միայն 24 տոկոս, իսկ քար ջարդող մեքենաներինը՝ 50 տոկոս:

Ինկերներ, ժամանակն ե, վոր մեր շինարարները հասկանան, վոր հարկավոր ե կազմակերպված կերպով կատարել բանվորական ուժի հավաքագրումը, հարկավոր ե կուլտուրական միջոցներ ստեղծել բանվորների բարեկանությունը, բարեկավել բանվորների ժամանակարարումը և վոչ թե ամեն ժամանակ շաղակաբեկ բանվորների պակասության մասին: Միթե նորմալ ե այն դրությունը, յերբ մեր շինարարության վրա աշխատող բանվորների քանակն ամսական միջին թվով հավասար լինելով 7,500 հոգու—9 ամսվա ընթացքում 26,000 նոր բանվոր ե յեղել և 27,000 բանվոր հեռացել: Այսպիսով, շինարարական բանվորների կազմը յերեք անգամ հիմնական փոփոխության ե յենթարկվել:

Վատ ե կազմակերպված աշխատանքը նաև շինարարական որյեկտներում. մեծ ե գործարկումների ու պարապուրդների տուկոսը, թույլ ե մասսայական աշխատանքը շինարարական բանվորների մեջ: Միթե նորմալ ե այն դրությունը, յերբ արդյունաբերության մեջ գործարկումները սեպտեմբեր ամսին կազմել են 0.08 տոկոս, իսկ շինարարության մեջ նույն ժամանակաշրջանում



կազմի են 0,3 տոկոս, այսինքն՝ մոտավորապես չորս անդամ ավելի:

Պարզ է, վոր այս բոլորի հետևանքով բարձրանում է կատարված աշխատանքի ինքնարժեքը և ընկնում ե վորակը:

ԿվՀ-ԲԴՏ-ի հետազոտությունները պարզել են, վոր շին. կազմակերպությունները փոխանակ իջեցնելու շինարարության ինքնարժեքը, բարձրացրել են 50 տոկոսով, իսկ տունածին որյեկտներում՝ յերեմն նույնիսկ 100-ով: Որինակ՝ սահմանված 32 ոռւբլու փոխարեն՝ մեկ խոր. մետրն «Արարատի» շենքում նստել ե 64 ոռւբլի, Կոմունալ բանկի շենքում՝ 30 ոռւբլու փոխարեն 60 ոռւբլի, նույնը պետք ե ասել միլիոնի շենքի վերաբերամբ:

Վոր մեր տնտեսավարների անշնորհքության ու նրանց կողմից աշխատանքն անպլան ու անսիստեմ առաջ տանելու հետեւ վանքով բարձրանում ե շինարարության ինքնարժեքը, գրան փայլուն ապացույց կարող են ծառայել թեկուղ հետևյալ միքանի փաստերը: Նուրբարաշենի մի սղոցարարը միայն հոկտեմբեր ամսում ստացել է 1.650 ոռւբլի, իսկ վորմնագիրը՝ 1.000 ոռւբլի: Կուրորտշինի չորրորդ կարգի բանվորն որական ստանում է 23—28 ոռւբլի: Քանաքեռշինի հողափոր բանվորը գնացուցակով նախատեսված է ո. 36 կ. փոխարեն ստացել է 8 ոռւբլի: Բնակշինկոպում վորմնագիրը 5 ո. 36 կոպեկի փոխարեն ստացել է 9 ոռւբլի 21 կոպեկի, Յերկոմշինում՝ 10 ո. 65 կոպեկի: Այսպիսի որինակները, դժբախտարար, շատ են: Այսպիսի «տնտեսավարության» փաստեր կարելի յերեկ նաև շինարարության մեջ աշխատող սայապանների վարձատրության բնագավառից: Սակայն այսքանն ել բավական ե գործնական յեղբակացություններ անելու համար:

Դրա հետ մեկտեղ, ինչպես ասացի վերեսում, ընկել ե աշխատանքի վորակը, վորը վորոշ տեղերում ուղղակի հասնում է հանցագործության:

Կուրորտշինի և Հայարդշինի «շինարարներն» ըստ յերեսութիւն վորոշել են, վոր բնակելի շենքերում հարկ չկա ծիսներույզներ թողնել (Կոմբանկի բնակելի շենքը, Քրդական Տեխնիկումի շենքը): Քրդական Տեխնիկումի շենքում հայտաբերված են մի շարք խոշոր թերություններ, ինչպիսիք են՝ ջրմուղի, կոյուզու, վենտիլացիայի անցքերի բացակայությունը, դահլիճի գերանների

շափերի անհամապատասխան լինելը, վորի հետևանքով առաստազը փուլ ե յեկել և այլն:

Հայառը կառուցում ե յերեք հարկանի բնակելի մի շենք, կավե շաղախով, ճահճային հողամասում, իսկ հիմքի խորությունը վերցվում է միայն 20 սանտիմետր, վորի հետևանքով շենքի հիմնական պատերը տվել են վտանգավոր ճեղքվածքներ, և այժմ կարիք ե զգացվում կամ ոժանդակ հիմնապատեր կառուցելու կամ թե չե՛ շենքն ամբողջությամբ քանդելու:

Ծխախոտի գործարանի վրա ծախսվում է մոտավորապես 2.000.000 ռուբլի, բայց գետնի նախնական ուսումնասիրություն չի կատարվել, և հետադայում պատերը խոշոր ճեղքվածքներ են տվել և կարիք ե առաջացել լրացուցիչ հենապատերի կառուցման ու հիմքերի ամբացման:

Վերջապես՝ միքանի խոսք կցանկանայի ասել Հայտնարկուությունը վերաբերյալ: Այս տարի մենք միքանի անգամ զբաղվել ենք տվյալ խնդրով և ստիպված ենք յեղել ամենախիստ միջոցներ ձեռք առնել յեղած թերությունները վերացնելու համար: Մեր կողմից քննված ե Ավանի նեղ յերկաթուղու խնդիրը: Յերրորդ տարին ե, ինչ Հայտնարկուությունը ձեռնարկել ե այդ չորս կիլոմետր նեղ գծի կառուցմանը և դրա վրա ծախսել ե հակայական գումարներ՝ մոտ 500.000 ռուբլի: բայց գիծը վոչ միայն պատրաստ չե, այլև յենթակա յե հիմնական փոփոխության: Դուցե ձեղ հայտնի յե, վոր մենք ստիպված յեղանք այդ պրոցեսի հեղինակներին՝ ինժեներ Դանիելյանի գլխավորությամբ՝ հանձնել դատական մարմիններին:

Յեզ, վերջապես՝ զբաղվել ենք նույնպես Հայտնարկուություն գծով կատարվող աղյուսի և կղմինդրի գործարանների կառուցման դործի ստուգմամբ: Այդ գործարանների մեծամասնությունը, վորոնք գտնվում են շրջաններում (Լենինական, Իջևան, Վաղարշապատ, Գյուլագարակ), կառուցված են առանց տեխնիկական հիմնավորման, առանց խոր ուսումնասիրության, առանց պրոյեկտների ու նախագծերի, վորի հետևանքով կառուցումը ձգձգվել ե 3—4 տարի:

Այս բոլոր հետազոտությունների արդյունքները մանրազնին կերպով քննված են կվՀ-ԲԴՏ-ի կողմից և արված են համապատասխան՝ կոնկրետ առաջարկություններ՝ թերությունները վերացնելու համար. միաժամանակ մի շարք տնտեսավարներ և շի-

նարարության պետեր կանչվել են թե զատական պատասխանառ-
տվության (Կուրորտշին, Հայրդղին, Բնակչինկոռպ, Յերկոմշին) և
թե յենթարկված են կուսակցական տույժի, կամ հանված են
աշխատանքից (Ցեմշին, Կուրորտշին, Բնակչինկոռպ, նոր կառուց-
վող յերկաթղիծ, Հայրդղին, Դուրի շինարարություն, Հայդի-
ճանտրան և այլն):

Չսահմանափակվելով տույժերով և կոնկրետ առողջադրանք-
ներով, ԿՎՀ-ԲԳՏ-ն թե հետազոտության և թե իր առորյա աշ-
խատանքի ընթացքում շին կազմակերպություններին ցույց է
ավել կոնկրետ ոգնություն, ոժանդակել և թե շինանյութեր ու
սարքավորում ստանալու և թե շին կազմակերպություններն ան-
հրաժեշտ մասնագիտական կազրերով ու բանուժով ապահովելու
գործում (Ցեմշին, Քիմշին, Կարբիդի յերկրորդ գործարան, Նու-
բարաշին և այլն):

ԳՅՈՒՂԻ ՍՈՅԻԱԼԻՍԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՍՊԱՐԵՉՈՒՄ

Ընկերներ, ինչպես ձեզ հայտնի յե, Համկ(բ)կ Կենտկոմի և
ԿՎՀ-ի 1933 թ. հունվարյան պլենումում, ինչպես և ճարվածային
կոլտնտեսականների առաջին համագումարում ընկ. Ստալինն իր
պատմական ծրագրային ճառում նշեց այն հիմնական խնդիրները,
վորոնք դրված են մեր կուսակցական վողջ կազմակերպության
առաջ գյուղի սոցիալիստական վերակառուցման բնագավառում:

Հասկանալի յե, վոր հաշվետու շրջանում մեր կուսակցական
կազմակերպությունների և ՎՀ-ԲԳՏ-ների աշխատանքի առանցքը
հանդիսացավ այն, վոր ամենակարև ժամանակի ընթացքում
լիովին վերացնենք գյուղի աշխատանքի առավարեղում թույլ
տրված բոլոր այն սխալներն ու թերությունները, վորոնք մատո-
նանշել եր մեր հանճարեղ առաջնորդը: Ցեվ ահա մեր կուսակցա-
կան կազմակերպություններն այս վերջին տարում իրենց աշ-
խատանքն այնպես վերակառուցեցին, վոր յերկրորդ հնդամյակի
առաջին տարին իրոք հանդիսացավ կոլտնտեսությունների բոլ-
շևիկացման, բերքատվության բարձրացման և գյուղատնտեսու-
թյան բոլոր պլանների ժամանակին կատարման տարի:

Ընկ. Խանջյանն արգեն հիշատակեց, վոր գարնանացանը,
ինչպես ամբողջ Խորհրդային Միության մեջ, նույնպես և մեզ

մատ՝ Հայաստանում ընթացավ միանգամայն հաջող կերպով:
Չնայած վոր այս տարվա կլիմայական պայմանների պատճառով
գարնանացանը մեկ ամիս ուշ սկսվեց, բայց, այնուամենայնիվ
մենք գարնանացանն ավարտեցինք ավելի շուտ, քան անցյալ
տարիներին և աշխատանքը կատարեցինք համեմատաբար ավելի
քարձոր վրակով: Զմուռն յերկարառ լինելը, գարնան ուղացումը
և մի շարք գժվարություններ (վորոշ տեղերում՝ սերմի պակա-
սություն) առիթ տվին ոպորտունիստական տարրերին նորից
վայրահաջելու, թե գարնանացանի պլանները կձախողվեն, թե
քաշող ուժը քիչ ե, ժամանակը կարճ ե, ցանքը չենք հասցնի և
այլն: Սակայն մեր կուսակցությունը կենտկոմի բոլցիկայն ղե-
կավարությամբ անհաջա պայքար մղելով բոլոր տեսակի ոպոր-
տունիստական տարրերի գեմ, մաքրեց կոլտնտեսությունները
թշնամի, քայքայիչ, կուլակային տարրերից: Մեր կոլտնտեսու-
թյունները, խորհունտեսությունները և աշխատավոր մենացըն-
տեսներն այս տարի ավելի լավ կազմակերպեցին իրենց աշխա-
տանքը՝ գարնանացանի պլանների կատարման ուղղությամբ:

Հենց այս գարնանացանի ընթացքում և նրանից հետո յեր,
վոր մեր կոլտնտեսությունները կազմակերպչական, տնտեսական,
քաղաքական տեսակետից սկսեցին ամրապնդվել, վորի հետևան-
քով գգալի չափով բարձրացավ կոլտնտեսականների աշխատանքի
արտազրականությունը, նկատելի չափով բարձրացավ բերքա-
տվությունը, այս տարի ավելի լայն չափով կիրառվեցին ագրո-
հեռարկումները, քան անցյալ տարիներին: Այդ ամենն ապա-
հովեցին կոլտնտեսականների խոշոր մասի նյութական-կենցա-
ղային դրության բարելավումը: Այս բոլորի հետ միասին՝ մենք
գեռ ունենք բազմաթիվ կոլտնտեսություններ,—առանձնապես
այն շրջաններում, ուր չկան քաղաքամիններ,—վորոնք խոշոր
թերություններ ունեն (աշխատանքի վոչ-ճիշտ կազմակերպում,
անտնտեսավարություն, աշխարհի շուայլում, վոչ-ճիշտ գրան-
ցում, կոլտնտեսությունների անբավարար աճում և այլն):

ԿՎՀ-ԲԳՏ-ի հետաղոտած կոլտնտեսությունների ավյաններից
պարզգում ե, վոր մի շարք կոլտնտեսություններում բրիգադնե-
րը գեռ չեն դարձել հիմնական և վճռող ողակը. անդամ վորոշ
կոլտնտեսություններում բրիգադներին չեն ամրացված հեղամա-
սերը, գյուղզգործիքները, քաշող ուժը, հաճախակի փոփոխության
և յենթարկվել ինչպես բրիգադի ղեկավարները, այնպես ել բրի-

գաղի անդամները, վորի հետևանքով աշխատանքի մեջ առաջաց-
ցել ե դիմազրկություն, անպատճանատվություն (Ալլահվեր-
դու շրջանի Սանահին, Կողբ, Ղաչաղան, Քյորփալու, Քեշիշենդի-
շրջանի Ռինդ, Սխոտայի շրջանի Թայշարուի գյուղերում):

Դեռ մի շարք շրջաններում (Նոր-Բայազետ, Մարտունի) կոլ-
տնտեսական բրիգադների կազմակերպման սկզբունքները կո-
պիտ կերպով խախտվում են: Մարտունու շրջանի միքանի կոլ-
տնտեսություններում բրիգադների անդամների թիվը այնքան մեծ-
է (Մարտունու կոլտնտեսության մեջ բրիգադը բաղկացած է
120, Թաղաքյանդում՝ 140—160, Զոլտխաչում՝ 110 հոգուց), վոր-
միանգամայն բացասարար և անդրազարձել կոլտնտեսությունների-
արտադրական պլանների կատարման վրա: Սանահինի կոլտնտե-
սություններում մինչև վերջերս կոմպլեկտավորված չեն յեղել
բրիգադները: Ձևականորեն ունենալով յերկու դաշտավարական
և մեկ անսամնապահական բրիգադ՝ կոլտնտեսության վարչու-
թյունը հաճախակի փոփոխության և յենթարկել նրանց կազմը-
Առաջին և յերկրորդ բրիգադները մեկ տարգա ընթացքում 3—4
անգամ փոփոխվել են, իսկ բրիգադի անդամները փոփոխության
են յենթարկվել գրեթե ամեն որ, վորն ստեղծել և դիմազրկու-
թյուն, անպատճախանակություն բրիգադի աշխատանքում:
Մըս հետեւնքով՝ հնածած հացահատիկը դաշտից ժամանակին չի
փոխադրվել և 10—15 տոկոսով փշացել ե: Բացի այդ, կալի ժա-
մանակ կալմիչ մեքենան անխնամ բանեցնելու պատճառով 10—20
տոկոս հացահատիկ և մնացել հարդի մեջ: Այդ նույն բրիգադնե-
րում կարտոփիլի հագաքման գործը վատ կազմակերպելու հետե-
կանքով՝ մենատնտեսները և անհատ կոլտնտեսականները մեկ
որում 5—6 փութ կարտոփիլ են հացաքել կոլտնտեսության դաշ-
տերից իրենց անհատական կարիքների համար:

Մեր կողմից հատուկ ստուգման և յենթարկվել Համկոմկուսի-
կենտկոմի մարտի 26-ի և Հայկոմկուսի կենտկոմի մայիսի 27-ի
վորոշումների կենսագործումը կոլտնտեսություններում: Առուց-
ման արդյունքները ցույց են տալիս, վոր Հայաստանի միքանի-
շրջաններում կոպիտ կերպով խախտված և գյուղատնտեսական
արտելի որինակելի կանոնադրությունը, վորն արտահայտվել և
մեկական կովերի, մանր անասունների և տնամերձ հողամասերի-
հանրայնացմամբ: Այս գծով վորոշ շրջաններում թույլ են տըր-
վել ինչպես աջ ոպորտունիստական, նույնպես և «ձախ» վարչու-

թարական սխալներ, մեկական կովերի և մանր անասուն-
ների վերադարձման ժամանակ արամազրություններ են յեղել
երագարձնելու բոլոր անասունները, ինչպես նաև քաշող ուժը
և ֆերմանների անասունները (Իջևան, Ղարաքիլիսա). նաև փոր-
ձեր են յեղել բոլորովին չվերադարձնելու հարկադրաբար հան-
րայնացված մեկական կովերը և մանր անասունների մի մասը:
Այդ առթիվ կվշ-ԲԴՏ-ն ձեռք ետու կոնկրետ միջոցներ՝ տեղում
թույլ արված սխալներն ուղղելու համար:

Չնայած կոլտնտեսությունների արտադրական նորմանների
կիրառման ուղղությամբ այս վերջին յերկու տարում ձեռք են
բերված՝ խոշոր հաջողություններ, բայց և այնպես ուղարկած միքանի
կոլտնտեսություններում գոյություն ունեն արտադրական նոր-
մանների կոպիտ խախտման գեպքեր: Այսպես, որինակ, Ախտայի
շրջանի Թայշարուխի կոլտնտեսության մեջ 1932 թ. արտադրա-
կան պլանով նախատեսված՝ 15,000 աշխարհի փոխարեն ծախսվել
և 25,000 աշխոր. ըստ նորմայի՝ գոմաշինաբարության վրա
պետք և ծախսվեր 700 աշխոր, բայց փաստորեն ծախսված և 1,500
աշխոր, սիլոսի հորը փորելու համար արտադրական նորմայով
պետք և ծախսվեր 30 աշխոր, բայց ծախսվել և 100 աշխոր: Աշխ-
որերի գրանցման ընագավառում ևս կոպիտ կերպով խախտ-
վում են արտադրական նորմանները: Թայշարուխի կոլտնտեսա-
կան Լյուգիլի Հարուրյունյանը 5 որ սիլոսի վրա աշխատելու հա-
մար ստանում և 34 աշխոր, Հմայտկ Ղարիբյանը նյունքան ու
աշխատելու համար ստանում և 31 աշխոր: Ավելին, նույն կոլ-
տնտեսության զեկավար ընկերները, վորոնք արտադրության
մեջ աշխատանք չեն կատարել, աշխորեր են ստացել. Գյուղկոուկի
նախագահ Արշակ Հարաւրյունյանը իբր թե նշանակվում և պահակ
և նրան վճարում են 15 աշխոր: Նույնպիսի գրություն ունենք նաև
Ալլահվերդու շրջանի Սանահին, գյուղի կոլտնտեսությունում:
այսուղեղ Գարեգին Հավսեփյանը (Հողբաժնի հրահանգիչ) հնձող
մեքենան դաշտ տեղափոխելու համար ստանում և 10 աշխոր: Իսկ
սրան հակառակ, ունենք այնպիսի գրություն, յերբ ամիսներով
կոլտնտեսականների աշխորելը չեն գրանցվում, վորի հետևանքով
բազմաթիվ կոլտնտեսականների բողոքները՝ աշխորերի և ար-
տադրական նորմանների վոչ-ճիշտ հաշվառման և գրանցման վերա-
բերյալ՝ մնացել են անհետեանք: Այսպիսի աղաղակող թերու-
թյուններ կան նաև ուրիշ շրջանների այլ կոլտնտեսություննե-

բուժ, թերություններ, վորոնց վերացումով միայն կապահովենք կոլտնտեսությունների լիակատար բոլցիկացման և կոլտնտեսականին ունեոր գարձնելու մասին ընկ. Ստալինի արձակած լուղումքը:

Ընթացիկ տարում կվէ-ԲԳՏ-ի նախաձեռնությամբ Հայաստանում կատարեցինք կոլտնտեսությունների ղեկավար-վարչական կազմի սառուղում-դումը, նպատակ ունենալով հայտաբերել և դուրս շպրտել կոլտնտեսությունների ապարատը խցկված դասկարգայնորեն խորթ, կուլակային տարրերին, նրանց տեղ տուաջքաշելով հարվածային կոլտնտեսականների, վորոնք իրենց աշխատանքով ապացուցել են իրենց նվիրվածությունը կոլտնտեսական կարգին:

Ծնորհիվ տեղական կուսակցական, կոմյերիտական, խորհրդային կազմակերպությունների ծավալուն պայքարի և լայն մասսայական բացատրական աշխատանքի՝ գտման ընթացքում մեզ հաջողվեց կոլտնտեսային վարչական ապարատը խցկված դասկարգայնորեն խորթ տարրերին հայտաբերել և վտարել կոլտնտեսության ապարատից:

Հայաստանում յեղած 912 կոլտնտեսությունից ստուգման և յենթարկված 26 շրջանում 857 կոլտնտեսության վարչական պարատը, ստուգված 2.319 հոգուց հեռացված են աշխատանքից 201 հաշվային և 233 պահեստային աշխատողներ: Ստուգման աշխատանքին մասնակցել են մոտ 68.000 կոլտնտեսականներ: Զըտվածներից՝ վորպես կոլտնտեսային գույքը վատնողների՝ արքած են դատի 81 հոգի, հեռացված են կոլտնտեսությունից 134 հոգի: Այդ ամենը խոշոր ազդակ հանդիսացան զյուղում մղվող անտեսական-քաղաքական կամպանիաների հաջողության համար (բերքահավաք, հացամթերում, աշնանացան, կոլտնտեսությունների նոր վերելք և այլն):

Սակայն այս ամենը մեզ իրավունք չեն տալիս կարծելու, վոր այսոր կոլտնտեսություններում չկան նստած մեզ թշնամի տարրեր: Չի կարելի չարձանադրել այն անհանդուրժելի փաստը, յերբ մի շարք ՇՎՀ-ԲԳՏ-ներ չեն կարողացել բավարար չափով հայտաբերել կոլտնտեսությունների վարչապարատում խցկված հակալուտնտեսային տարրերին, իսկ հայտաբերվածների նկատմամբ ունեցել են վորոշ հաշտվողական վերաբերմունք, ինչպես որինականական արժեքը կազմում է այլն:

Ստուգատեսը ցույց տվեց, վոր մի շարք շրջաններում կուտնածությունների հաշվային և պահեստային աշխատանքները դաշտում են միանգամայն անբավարար դրության մեջ, մինչեւ Հողժողկամատն ու Տորակառությունների իսկապես անբավարար ուշադրություն են դարձնել այդ աշխատանքները բարելավելու և իրենց կոչման բարձրության վրա դնելու խնդրին:

Ստուգման և զտման ընթացքում կվէ նախագահությունն ու ԲԳՏ կողեզիան կայացըել են մի շարք վորոշումներ, վորոնց անշեղ կիրառմամբ ուղղված են ստուգման և զտման ասպարեզում թույլ տրված սխալներն ու թերությունները:

Վերջին շրջանումն եր, վոր մենք նախաձեռնեցինք նաև կոլտնտեսությունների վարչատնտեսական ծախքերի կրճատումը: Այդ աշխատանքն ընթացավ բերքի բաշխմանը զուգընթաց, վոր խոշոր հասրավորություններ ընձեռեց տեղուուտեղը կըսձանական-տնտեսական ավելորդ ծախքերի կրճատման նպատակով ձեռնարկած մեր աշխատանքը տեղուում հայտաբերեց, վոր բազմաթիվ կոլտնտեսություններում չափից ավելի աճել են վարչատնտեսական ծախքերը (Ուզունարի կոլտնտեսությունում կազմում են 11 տոկոս, կան նման դեպքեր նաև Բասարգեչարում, Արարանում և այլն), իսկ տեղական հողբաժինները, ՄՏԿ-ները պատշաճ ուշադրություն չեն դարձնել այս խոշոր բացի վերացման վրա: Փաստերն ապացուցում են, վոր մի շարք շրջաններում գերածախսվել են նախատեսված նորմաները: Մեղքիում 25 կոլտնտեսության ստուգումից պարզվում է, վոր խոշոր գերածախս և կատարվել վորից յեներով՝ ՇՎՀ-ԲԳՏ-ն կրճատել և 760 աշխոր, կոտայքում՝ 1.823 աշխոր, Ենինիականում՝ 3.750 աշխոր և այլն:

Բացի դրանից, նկատվում է, վոր գրեթե բոլոր վորքը կուտնածություններում վարչատնտեսական ծախքերը նախատեսված 8 տոկոսից բարձրացել են 10—13 տոկոսի, իսկ դրամականը՝ 1,5—6 տոկոսի: Այս դրությունը մասսամբ արդյունք ե այն բանի, վոր բոլոր կոլտնտեսություններում վարչական ապարատի պահպանման համար աշխորերի հատկացումը և դրամական ծախքերը կատարվում են առանց կոլտնտեսության ընհանուր ժողովի հաստատման՝ ՄՏԿ-ների, Հողժողկինների միանգամայն թույլ հսկողության հետևանքով: Այս ուղղությամբ ևս կվէ-ԲԳՏ մարմինները լայն գործնական պայքար են ծավալել:

Այստեղ ձեր ուշադրությունը պետք է հրավիրվել գյուղի մեր աշխատանքի մի կարևոր թերության վրա, վորի մասին կուսակցական և վերադաս մարմինները բազմից վորոշումները են կայացրել: Խոսք վերաբերում է ՄՏԿ-ի կողմից դեպի վասելանյութերի ոգտագործումը ցուցաբերվող անհոգի և անինա վերաբերմունքին: Այսպես, որինակ, վառելանյութերի ծախսումը Հայաստանի ՄՏԿ-ներում այս գարնանացանի ընթացքում միջին հաշվով բարձրացավ 132 տոկոսով. իսկ Վաղապատի ՄՏԿ-ն հացրել է 158 տոկոսի, կամ 30 լիտրի փոխարեն ծախսել է 47,6 լիտր վառելանյութի: Լենինականի ՄՏԿ-ն ծախսել է կողտ հողերի համար 73,1 լիտր, իսկ վափուկ հողերի համար՝ 38,3 լիտր, վոր գերազանցում է նորմաներն ավելի քան 40 տոկոսով: Այս յերեւույթը վկայում է, վոր մի շարք ՄՏԿ-ների դիրեկտորներ ուշադրություն չեն դարձրել վառելանյութերի ծախսման հաշվառքին, ինչպես նաև առանձին բրիգադներին և տրակտորներին արված չեն յեղել ճիշտ նորմաներ, խախտվել են ժկթ-ի գորոշումները:

Վերջապես, ընկերներ, ձեր առանձին ուշադրությունը պետք է հրավիրի այն չափազանց կարեոր հանգամանքի վրա, վոր մեզ մոտ մի շարք վայրերում ուղղակի դատապարտելի կերպով են ոգտագործում գյուղատնտեսական մեքենաները: Կան դեպքեր, յերբ գյուղատնտեսական խոշոր մեքենաները յերկար ժամանակով մատնվում են անգործության: 1933 թ. ընթացքում Բարսրգեչարի 20 տրակտորները վոչ մի հեկտար չեն վարել: Մարտունու ՄՏԿ-ի 9 տրակտորները վողջ գարնանացանի ընթացքում ընդամենը վարել են 4 հեկտար: Ժամանակն է, վոր Հողժողկոմատն ու տեղական կազմակերպությունները մի անգամ ընդլիշտ վերջ տան այս խայտառակությանը և իսկապես վերակառուցեն իրենց աշխատանքը:

Վերջին տարիներում կվշ-ԲԴՏ-ի ուշադրության կենտրոնում են յեղել նաև տեխնիկական կուլտուրաները և մանավանդ բամբակը: Բամբակի պլանների կատարման ուղղությամբ մենք այս տարի իրոք ունենք լուրջ հաջողություններ: Պահնը (1933 թ.) դերակատարվեց: Այս տարի շոշափելի առաջինացնում ունեցանք բամբակի բերքատվության գործում. 1932 թ. 302 կիլոյի փոխարեն այս տարի մեկ հեկտարից ստացանք 500 կիլոյից ավելի բամբակ: Սակայն տեխնիկական կուլտուրաների և բամ-

բակի մշակման ասպարեզում զեռ ունենք խոշոր թերություններ՝ տրակտորների ցածր արտադրականությունը, ազրուելինիկան ձեռնարկումները վոչ պահանջված չափով կիրառելը, անբավարար ուշադրությունը գեպի մենատնտեսների ցանքերը:

Այստեղ պետք է արձանագրել, վոր գյուղատնտեսության բնագավառում զեռ մենք չունենք այն հստակ ու ճշգրիտ պլանավորումը անտեսության բոլոր ճյուղերում, վորը պահանջում է մեր կուսակցությունը:

Մեր ուսումնամիրությունից պարզվեց, վոր ցանքի տարածությունների ճիշտ պլանավորումը միանգամայն բացակայում է: Բնորոշ և այդ տեսակետից Ղամարլիք գեպքը: Ղամարլիքի արջանում ցանքերի տարածության վերաբերյալ իր ժամանակին յեղած պաշտոնական տեղեկությունները հետեւյալ հակասական թվերն եյին ներկայացնում:

Կոլտնտես. ցանքի Անհատ. սեկտ. ցանքի տարածությունը տարածությունը	
1. Հոս զըջ. մաքմինների տվյալների	5088 հեկտ.
2. Հոս կոնտրակտայիշի պլանի	4809 "
3. Հոս հողժողկոմատն ավյալների	5281 "
4. Հոս փաստորն կնքվ. պայմանագրերի	5149 "

Այս փաստը ցույց է տալիս, վոր մեր Հողժողկոմատը դեռ անբավարար և աշխատում այդ ուղղությամբ, վոր բամբակագործության ասպարեզում աշխատող մի շարք կազմակերպությունների միջն բացակայում և կենդանի կառը: Այսպիսի փաստեր կան ուրիշ ըրջաններում ևս (Մարտունի, Բայազետ և այլն): Առաջիկայում համապատասխան մարմինները պետք է ամենալուրջ ուշադրությունը դարձնեն այս խոշոր բացը վերացնելու վրա:

Ընկերներ, կվշ-ԲԴՏ-ի աշխատանքն անամնապահության բնագավառում վերջին յերկու տարում ընթացել են առավելապես անամնապահական խորհութեանությունների կազմակերպական տնտեսական հարցերի լուծման (խոտհարքների, շինարարության, բեղմավորման կամպանիայի կազմակերպման հարցեր) ուղղությամբ: Մեր կողմից կատարված հետազոտություններով մենք հստակորեն ու պարզուց կերպով կարողացել ենք դրսեռներ այն թերությունները և դժվարությունները, վորոնք խանգարել են անամնապահության գարգացմանը: Շնորհիվ այն բանի, վոր մեր

